

ՀԱՎԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԸՍՏ ՊԱՅՄԱՆՁԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ՝ ԱԶԱԿՑԵԼՈՒ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՎ ՀԱՎԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀԱՐՑ

Կարո՞ղ եք բնութագրել կոռուպցիոն և հակակոռուպցիոն պայքարի ընդհանուր իրավիճակը Հայաստանում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կոռուպցիոն իրավիճակը Հայաստանում
2. Հակակոռուպցիոն պայքարը Հայաստանում
3. Հղումներ

Հեղինակներ՝ Սոֆիա Ուիթթերգ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ
tihelpdesk@transparency.org

Վարուժան Հոկտանյան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Գրախոս՝ Դիտեր Չինբաուեր, Թրանսփարենսի Ինթերնեշնլ

Ամսաթիվ՝ օգոստոս 23, 2013 թ.

ԱՄՓՈՓՈՒՄ

Կոռուպցիան Հայաստանում Էնդեմիկ է և համատարած՝ ներթափանցած հասարակության բոլոր մակարդակները: Կոռուպցիայի առումով առավել խոցելի է պետական կառավարման համակարգը, մասնավորապես՝ դատական իշխանությունը, ոստիկանությունն ու առողջապահական համակարգը: Այս իրավիճակն է արձանագրվել ոլորտների մեծ մասում՝ կառավարման ցուցանիշների ցածր կատարողականների հիման վրա:

2008 թ. ընտրություններին հաջորդած քաղաքական ճգնաժամը ակներև է դարձրել խորքային բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը երկրի կառավարման համակարգում և դրել է կառավարության բարեփոխումներ իրականացնելու՝ նոր քաղաքական կամքի սկիզբը, հանգեցնելով բարեփոխումների նոր ալիքի, նպատակ ունենալով դրանց ընդունմամբ արդիականացնել պետությունը: Ի թիվս այլ բարեփոխումների՝ ընդունվել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը, ՀՀ ընտրական նոր օրենսգիրքը և Հանրային ծառայության մասին ՀՀ նոր օրենքը:

© Թրանսփարենսի Ինթերնեշնլ. Հեղինակային իրավունքները պահպանվում են

Արմատավորված կոռուպցիան, հովանավորչության ուժեղ ցանցերը, մասնավոր ձեռնարկության և պետական հիմնարկության միջև հստակ տարանջատման բացակայությունը, ինչպես նաև քաղաքական ու բիզնես վերնախավերի մասնակի հանրնկնումը այն համոզման են հանգեցնում, որ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված ջանքերն առանձնապես մեծ արդյունք չեն ունենա: Ավելին, Հայաստանի կառավարման թերությունները խորացել են՝ հանգեցնելով տարածված քաղաքական ապատիայի ու ցինիզմի այն քաղաքացիների շրջանում, ովքեր չեն տեսնում, որ իրենք կարող են ազդեցիկ դերակատարություն ունենալ կոռուպցիայի դեմ պայքարում: Իրավիճակն էլ ավելի է սրվել խիստ վերահսկվող լրատվամիջոցների դաշտի պատճառով:

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նախապատմություն

1991 թ. Խորհրդային Միությունից անկախացումից հետո Հայաստանը պայքարում էր համապատասխան պետական ինստիտուտներ հիմնելու և նորաստեղծ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխանեցվելու նպատակով (Բերթելսման հիմնադրամ 2012): Հարևան Ադրբեջանի դեմ շարունակվող պատերազմը, ինչպես նաև Թուրքիայի հետ պատմական վատ հարաբերությունները, որի հետևանքով երկրի արևելյան ու արևմտյան սահմանները շրջափակման էին ենթարկվել, իրենց հերթին 1990-ականների կեսերին հանգեցրել էին երկրի տնտեսական ճգնաժամի (Ֆրիդոմ Հաուս 2013 ա): Շուկային թերապիայի մեթոդով իրականացված տնտեսական բարեփոխումները ազդեցիկ տնտեսական աճ էին ապահովել, բայց նոր ազգային հարստության խիստ անհավասար բաշխումը նպաստել էր եղած անհամապատասխանության խորացմանը՝ ստեղծելով խոր սոցիալ-տնտեսական բաժանումներ (Բերթելսման հիմնադրամ 2012):

Մեծաթիվ հայեր են արտագաղթել այդ տարիներին քաղաքական դժգոհության կամ տնտեսական հնարավորությունների բացակայության պատճառով՝ ստեղծելով հսկայական սփյուռք: Հայաստանի բնակչության թիվը մոտավորապես 3 միլիոն է, իսկ արտասահմանում հիմնականում ֆրանսիայում, Իրանում, Ռուսաստանում և ԱՄՆ-ում բնակվող հայերի թիվը կազմում է 8 միլիոն (Բի-Բի-Սի 2007):

Անկախացումից ի վեր Հայաստանին բնորոշ է կառավարության և քաղաքական վերնախավի նկատմամբ խոր հանրային անվստահությունը: Համապետական յուրաքանչյուր ընտրության արդյունք վիճելի է համարվել ընդդիմության կողմից, որը չի ճանաչել կառավարության լեգիտիմությունը (Ֆրիդոմ Հաուս 2013 ա): Երկար ժամանակ Հայաստանը դիտարկվում էր որպես թույլ կուսակցություններ ու հարաբերականորեն բուռն քաղաքական կյանք ունեցող համակարգ (Ֆրանս Դիպլոմատի 2013): Կուսակցությունները, որ գլխավորապես հիմնված են անձերի վրա, սահմանափակ դեր ունեն ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածներում (Ֆրիդոմ Հաուս 2013 ա): Բազմաթիվ կեղծիքներով ու չարաշահումներով ուղեկցված 2008 թ. ընտրությունները հանգեցրել են քաղաքացիական խռովության ու Հայաստանի բնակչության ապստամբության: Բազմիցս իրականացված քաղաքական չարաշահումներն ու արմատացած կոռուպցիան սասանել են հանրության հավատն ու որևէ քաղաքական առաջնորդի սատարելու ցանկությունը: Դիտորդները նշում են, որ այդ իրավիճակը նպաստել է քաղաքական ապատիայի և ցինիզմի դրսևորման հայ հասարակության մեջ (Բերթելսման հիմնադրամ 2012): 2012 թ. և 2013 թ. համապետական ընտրություններում ՀՀ Ազգային Ժողովում ՀՀԿ-ն կրկին դարձել է մեծամասնություն, իսկ Ս. Սարգսյանը՝ նախագահ:

Հայաստանը համեմատաբար աղքատ երկիր է՝ մեկ շնչին հասնող մոտավորապես 3200 ԱՄՆ դոլար ՅՆԱ-ով: Այն խիստ կախման մեջ է արտասահմանում ապրող հայերի տրանսֆերտներից: Այդ փոխանցումների կրճատումը նպաստել է 2009 թ. խոր լճացմանը երկրում: Տնտեսությունը մեծապես կախված է ծառայությունների մատուցման և շինարարական ոլորտներից և բնորոշվում է գործարարների փակ «օլիգարխիկ» ցանցերով (Բերթելսման հիմնադրամ 2012):

Գլխավորապես հայաբնակ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանը շարունակում է լարվածություն բորբոքել Հայաստանի և Ադրբեջանի միջև: Չնայած միջազգայնորեն ճանաչված է որպես Ադրբեջանի մաս՝ վերջինս իշխանություն չունի տարածաշրջանի մեծ մասի նկատմամբ 1990-ականների սկզբից ի վեր, և Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչները խաղաղության բանակցություններ էին վարում վիճարկված կարգավիճակի շուրջ: Չնայած բազմաթիվ միջազգային միջնորդական ջանքերին՝ բանակցություններն առաջընթաց չեն գրանցել:

Կոռուպցիայի չափը

Համաշխարհային բանկի Կառավարման համաշխարհային ցուցանիշների հետազոտության արդյունքում «կոռուպցիայի վերահսկման» ցուցանիշով Հայաստանը 30 միավորով դասվում է ցածր տոկոսներ գրանցած երկրների շարքը՝ 0-ից 100 սանդղակում, որտեղ 0-ն ամենացածրն է, իսկ 100-ը՝ ամենաբարձրը: 2002 թ. ի վեր Հայաստանի արժեքը մնացել է հարաբերականորեն կայուն՝ տատանվելով 2002 թ. 34-ի և 2007 թ. 24-ի միջև: «Օրենքի գերակայության» ցուցանիշով Համաշխարհային բանկի կողմից կառավարման չափում կիրառելուց ի վեր Հայաստանն ունեցել է բավականին ցածր արժեք Կառավարման համաշխարհային ցուցանիշներում՝ տատանվելով 34-ի (1996 թ.) և 46-ի (2008 թ.) սահմաններում. 2011 թ. միավորը 43 էր: Նույն կերպ, «ձայն և հաշվետվողականություն» ցուցանիշում չի ունեցել բարձր կատարողական՝ 28 միավոր (2011 թ.):

Թրանսփարենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի ընկալման 2012 թ. համաթվով Հայաստանը գնահատման ենթարկված 176 երկրների ու տարածքների շարքում զբաղեցնում էր դասակարգման աղյուսակի 105-րդ տեղը 34 միավորով՝ 0-ից 100 սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է բացարձակ կոռումպացված, իսկ 100-ը՝ բացարձակ մաքուր: Հայաստանը միջին դիրք է գրավում իր երկու անմիջական հարևանների միջև՝ լինելով 51-րդ հորիզոնականը զբաղեցնող Վրաստանից և 54-րդը զբաղեցնող Թուրքիայից ցածր, բայց 139-րդ տեղը զբաղեցնող Ադրբեջանից բարձր:

Սեփական երկրում կոռուպցիայի վերաբերյալ քաղաքացիների ընկալումները դիտարկող ԹԻ մեկ այլ հետազոտության՝ 2013 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՅԲ) արդյունքներով հարցման ենթարկված անձանց 82 տոկոսը վկայում է, որ կոռուպցիայի մակարդակը Հայաստանում անցյալ երկու տարիների ընթացքում կամ մնացել է նույնը (39 տոկոս) կամ ավելացել է (43 տոկոս): Ավելին, հարցվածների 61 տոկոսը երկրի հանրային ոլորտի կոռուպցիան համարում է լուրջ հիմնախնդիր:

Բնութագրական է, որ Համաշխարհային բանկի 2009 թ. Ձեռնարկությունների հետազոտության շրջանակում հարցման ենթարկված բիզնես ներկայացուցիչները համակարծիք են կոռուպցիայի այս ընկալման հետ: Հարցման ենթարկված ընկերությունների մոտ 40 տոկոսն է կոռուպցիան համարում Հայաստանում գործարարությամբ զբաղվելու լուրջ խոչընդոտ: Նույն կերպ, կոռուպցիան դիտվում է որպես ամենախնդրահարույցը երկրում գործարարությամբ զբաղվելու համար այն ֆիրմաների կողմից, որոնք դիտարկվել են Համաշխարհային տնտեսական ֆորումի 2012-2013 թթ. Մրցունակության համաշխարհային

զեկույցում: Համաձայն ԱՄՆ Պետքարտուղարության Ներդրման մթնոլորտի 2012 թ. զեկույցի՝ կոռուպցիան կա և մնում է որպես Հայաստանում ներդրումների լուրջ խոչընդոտ:

Կոռուպցիայի տեսակները

Վարչական կոռուպցիա (վարչարարական կոռուպցիա)

«Մանր» կոռուպցիան համատարած է ողջ հասարակությունում, և ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը մտահոգություն է հայտնել կառավարման բոլոր ոլորտներում տարածված կոռուպցիայի վերաբերյալ (ԱՄՆ Պետքարտուղարություն 2012 ա, 2012 ք):

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2013 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՐԲ) տվյալների՝ Հայաստանում բնորոշ է հարցերը լուծելու համար կաշառք տալը, վարչական ընթացակարգերի արագացումը կամ «մաղարիչը»: Հարցման ենթարկվածների մոտավորապես մեկ հինգերորդն ընդունել է, որ կաշառք է տվել հարցման դիտարկած ծառայություններից մեկն ու մեկին Նախորդ 12 ամսվա ընթացքում, և մարդկանց մոտավորապես 70 տոկոսը քաղաքացիական ծառայողներին համարել է կոռումպացված կամ ծայրահեղ կոռումպացված: Նույն կերպ Համաշխարհային Բանկի՝ Ձեռնարկությունների 2009 թ. հետազոտության համաձայն՝ հարցման ենթարկված արտերկրյա ընկերությունների ավելի քան 15 տոկոսը հայտնել է, որ ստիպված էին կաշառք տալ այդ երկրում աշխատելիս: Հետաքրքիր է, որ երկու հարցումներն էլ այն փաստն են արձանագրում, որ կոռուպցիայի չափի ամբողջական ընկալումն (հարցվածների 82 տոկոսը կարծում է, որ կոռուպցիան լուրջ կամ շատ լուրջ հիմնախնդիր է, և այդ կարծիքն ունեն նաև հարցման ենթարկված գործարարների 40 տոկոսը) ավելի կարևոր է, քան փողոցի մակարդակի կոռուպցիոն ձևերի վերաբերյալ հայտնած փորձառությունը:

Բերթելսման հիմնադրամն իր՝ 2012 թ. Հայաստանի վերաբերյալ հետազոտության մեջ հայտնել է, որ երկրի վարչակարգն առաջնորդվում է խորհրդային ժամանակներից ժառանգած փորձառությամբ՝ վարքագիծը դարձնելով չափացանց վարչարարական և ոչ արդյունավետ: Խիստ վարչարարությունը հակված է պարարտ հող Նախապատրաստել կոռուպցիայի համար, և չնայած համակարգը բարեփոխելուն ուղղված վերջին ջանքերին (տես ստորև)՝ ղեկավարությունում կաշառակերությունը մնում է որպես լուրջ հիմնախնդիր (Բերթելսման հիմնադրամ 2012):

Խոշոր կոռուպցիա

Հայաստանում կոռուպցիային ամնչվող ամենակարևոր հարցերից մեկը քաղաքական և բիզնես վերնախավերի սերտաճումն է (տես հովանավորչության մասին հատվածը), որը խորացնում է խոշոր կոռուպցիայի երևույթի վտանգը:

Թեպետ ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ ԱԺ պատգամավորներին արգելվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, այդ արգելքը հաճախ անտեսվում է (Միջազգային ճգնաժամային խումբ 2012): Իշխանություն ունեցող պաշտոնյաները կամ քաղաքական գործիչները հաճախ ղեկավարում են մասնավոր ընկերություններ թաքնված գործընկերությունների կամ հարազատների միջոցով (ԱՄՆ Պետքարտուղարություն 2012 ա): Մասնավոր ձեռնարկության և պետական հիմնարկի միջև հստակ տարանջատման բացակայությունը տեղիք է տալիս խոշոր մանիպուլյացիայի պետական գնումներում՝ հիմնվելով առկա կանոնակարգերի վատ կիրառման վրա, ինչի արդյունքում գնումների համակարգը ոչ արդյունավետ և ոչ թափանցիկ է (Ֆրիդոմ Հաուս 2013 ա):

Հայաստանում գնումների կանոնակարգման մեջ պատմական բացերից մեկը արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակներին անհարկի դիմելն է որպես մեկ անձից գնումների իրականացման նախապայման: Սա մասամբ կարելի է բացատրել համապատասխան օրենսդրություններում «անկանխատեսելի իրավիճակների» հստակության բացակայությամբ: Համաշխարհային բանկը մտահոգություն է հայտնել Հայաստանում մեկ անձից կատարվող գնումների վերաբերյալ (Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն 2011 ա):

Կառավարությունը քայլեր է ձեռնարկել խոշոր կոռուպցիայի հիմնախնդիրը հաղթահարելու ուղղությամբ 2011 թ. գնումների մասին նոր օրենքի ընդունմամբ:

Քաղաքական կոռուպցիա

Թրանսփարենսի ինթերնեշնլի 2013 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) տվյալներով հարցման ենթարկված քաղաքացիների մոտավորապես 60 տոկոսը կարծում է, որ կուսակցություններն ու խորհրդարանները կոռումպացված կամ ծայրահեղ կոռումպացված են: Փորձագետները մատնանշում են, որ Հայաստանի քաղաքացիների համար սովորական է դարձել ականատես լինել քաղաքական առաջնորդների շրջանում արմատացած կոռուպցիայի և ոչ ճկուն ու փակ քաղաքական համակարգի՝ արտացոլված հասարակական կյանքից բնակչության հարաբերական մեկուսացման, համատարած քաղաքական ապատիայի և ցնիզմի դրսևորմամբ (Բերթելսման հիմնադրամ 2012): Նմանապես, Կովկասյան բարոմետր 2012-ը, որն իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների կողմից, ցույց է տալիս, որ հայերի 30 տոկոսից ավելին խորհրդարանի և գործադիր կառավարության հանդեպ «ամբողջովին թերահավատ են»:

Ֆրիդոմ Հաուսի զեկույցի համաձայն պատմականորեն քաղաքական ապատիան ու կառավարության նկատմամբ անվստահությունը, ուղեկցվելով բարձր մակարդակի աղքատությամբ, Հայաստանի բնակչությանը խոցելի են դարձրել ընտրակաշառքի հանդեպ (Ֆրիդոմ Հաուս 2013 ա): Համաձայն Բերթելսման հիմնադրամի՝ 1990 թ. սկզբին Հայաստանում կայացած ամենաառաջին ընտրությունները երկրում տեղի ունեցած միակ ազատ ու արդար ընտրություններն էին: Ընտրական գործընթացն այդ ժամանակից ի վեր համակարգված կեղծվել է՝ ուղեկցվելով ընտրակեղծիքով, քվեառույթի լցումմամբ, ընտրակաշառքով, խարդախությամբ և ընտրողների ահաբեկմամբ (Ֆրիդոմ Հաուս 2013 ա):

2008 թ. տեղի ունեցած ընտրությունները, որոնք իշխանության բերեցին Սարգսյանին, բնակչության կողմից ընկալվել են որպես արատավոր և հանգեցրել են քաղաքացիական խռովության: Բողոքող ցուցարարների դեմ կիրառված բռնաճնշումն իր հերթին բարեփոխումների ալիքի է հանգեցրել, որի արդյունքում նոր ընտրական օրենսգիրք է ընդունվել: Չնայած նման ջանքերին, համապետական՝ 2012 թ. ՀՀ ազգային ժողովի ու 2013 թ. ՀՀ նախագահի ընտրություններն ուղեկցվել են ընտրակեղծիքներով: Թրանսփարենսի Ինթերնեշնլի հայաստանյան մասնաճյուղը՝ Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն անց է կացրել ընտրությունների վերաբերյալ հարցում: Հարցման ենթարկվածների մոտավորապես 20 տոկոսին կա՛մ բաժանվել է և կա՛մ գիտեն ինչ որ մեկին, ում բաժանվել է փող կամ ապրանք (ի թիվս այլ ապրանքների՝ բջջային հեռախոս, մուրաբա և այլն) 2012 թ. ՀՀ ԱԺ ընտրությունների ժամանակ որոշակի թեկնածուի կամ կուսակցության օգտին քվեարկելու համար: Նույն ձևով, 2013 թ. ընտրությունների մասնակից դիտորդը այն ընտրական տեղամասում, ուր ինքը դիտորդություն էր իրականացրել, ականատես է եղել լուրջ ընտրակեղծիքի՝ բազմակի քվեարկության կամ լցումման դեպքի (Իսմայիլի 2013 թ.):

Ընտրությունները հաճախ վարչական ռեսուրսի չարաշահման հետ կապված բողոքների տեղիք են տալիս՝ ետ պահելով ընդդիմադիր կուսակցություններին ֆինանսավորելուց և սահմանափակելով նրանց գործունեությունը: Հաճախ են հնչում բիզնեսին ուղղված

մեղադրանքներ, որ իրենց եկամուտներից միջոցներ են տրամադրում ղեկավար կուսակցությանը հարկային աջակցության դիմաց (ԱՄՆ Պետքարտուղարություն 2012 թ):

Յոզանավորչական ցանցեր և հանցավոր համաձայնություն

Հայաստանի քաղաքական համակարգի հիմնական առանձնահատկությունը քաղաքական ու տնտեսական վերնախավերի սերտաճումն է և երկրի ռեսուրսները վերահսկող այդ խմբերի միջև փոխհամաձայնությունը (Ֆրիդոմ Հաուս 2013 ա): Փակ բիզնես ցանցերը, որ խմբված են ոչ ֆորմալ կարտելների շուրջ և կիսամենաշնորհները, որ աջակցում և շահ են ստանում քաղաքական վերնախավից, սովորաբար կոչվում են «օլիգարխներ»: Նրանք ունեն ծանրակշիռ, թեպետ ոչ համակարգված ազդեցություն քաղաքականության վրա հովանավորչական ցանցերի միջոցով՝ հատկապես մայրաքաղաքից դուրս տարածքներում, որ ավելացնում է կոռուպցիայի հնարավորությունը: Որոշ օլիգարխներ ներգրավված են ընտրակալեղծիքներում, օրինակ՝ օգտագործելով բարեգործական հիմնադրամներ, ապահովելու որոշակի կուսակցության ընտրողների աջակցությունը՝ բարիքներ և բնամթերք բաժանելով (Միջազգային ճգնաժամային խումբ 2012): Նրանք նաև ներգրավված են ընտրատեղամասերում ընտրակաշառքների, լցոնումներում և ի թիվս այլ խախտումների՝ ընդդիմության առաջնորդներին և ընտրություններում դիտորդներին ահաբեկելու գործում¹:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի ԿՀԲ 2013 զեկույցի համաձայն հարցման ենթարկված քաղաքացիների 80 տոկոսից ավելին կարծում են, որ կառավարությունը ղեկավարվում է մի քանի խոշոր կազմակերպությունների կողմից, որ գործում են սեփական շահից ելնելով:

Նեպոտիզմը Հայաստանի կառավարական գործակալությունների և պետական կառավարման հիմնական բնորոշ հատկանիշն է: Համաձայն ԿՀԲ տվյալների՝ հարցման ենթարկվածների համարյա 80 տոկոսի համար անձնական կապերը կարևոր են հարցեր լուծելու համար՝ Հայաստանի պետական հատվածի հետ առնչվելիս (Թրանսփարենսի Ինթերնեշնլ 2013): Հանրային զբաղվածությունը մեծապես կիրառվում է ծանոթների և վարձատրելու համար, և մեղադրանքներ կան, որ կառավարության պաշտոնյաները խտրականություն են ցուցաբերում ընդդիմադիր կուսակցությունների անդամների հանդեպ՝ աշխատանքի ընդունելու որոշումներ կայացնելիս (ԱՄՆ Պետքարտուղարություն 2012 թ):

Կազմակերպված հանցավորություն և փողերի լվացում

Հայաստանը կարևոր տարածաշրջանային ֆինանսական կենտրոն չէ, և փողերի լվացման ռիսկը մեծ չէ: Երկրի աշխարհագրական դիրքն, այնուամենայնիվ, այն խոցելի է դարձնում թրաֆիկինգի զանազան ձևերի համար (Արժույթի միջազգային հիմնադրամ 2010): Համաձայն ԱՄՆ Պետքարտուղարության՝ այնպիսի թմրադեղերի անօրինական առևտուրը, ինչպիսիք են ամֆետամինը Ռուսաստանից կամ Թուրքիայից, իսկ հերոինը՝ Աֆղանստանից Հայաստանի միջոցով են անցկացվում և տեղում նույնպես չարաշահվում են (ԱՄՆ Պետքարտուղարություն 2013 ա): Փողերի լվացումը Հայաստանում հիմնված է սփյուռքից փոխանցվող տրանսֆերտների համակարգի, ինչպես նաև բարձր մակարդակի գործարքների վրա, կատարված, օրինակ, անշարժ գույքի ու ոսկու շուկայում (ԱՄՆ Պետքարտուղարություն 2013 ա): Այն հանգամանքը, որ Հայաստանը կանխիկ դրամի վրա հիմնված տնտեսություն է, լրացուցիչ դժվարություններ է ներկայացնում փողերի լվացման դեմ պայքարի իրականացման համար:

Հայաստանը սկզբնաղբյուր երկիր է հարկադիր աշխատանքի և շահագործման նպատակով թրաֆիկինգի ենթարկվող տղամարդկանց, կանանց և երեխաների համար: Հայ

¹ Այս տեղեկատվությունը բաղված է տեղացի փորձագետների հետ խորհրդակցության արդյունքում

կանայք և աղջիկները սեռական թրաֆիքինգի են ենթարկվում երկրի ներսում, Միացյալ Արաբական Եմիրություններում և Թուրքիայում: Հարկադիր աշխատանքային թրաֆիքինգի են ենթարկվում հիմնականում Ռուսաստանում և Թուրքիայում (ԱՄՆ Պետքարտուղարություն 2013 թ):

Կոռուպցիայի նկատմամբ ամենախոցելի հատվածները

Արդարադատություն

Հայաստանի պետական ապարատի գերակշռող մասը կազմում է գործադիր իշխանությունը (Ֆրանս Դիպլոմատի 2013), և չնայած իշխանությունների ֆորմալ բաժանմանը, դատական իշխանությունը մեծ մասամբ ենթակա է գործադիրին (Բերթելսման հիմնադրամ 2012): Դատական համակարգում, ինչպես նախկին Խորհրդային Միության բազմաթիվ երկրներում, շարունակում են ազդեցկ լինել դատախազները՝ հետևաբար կառավարությունը (Միջազգային ճգնաժամային խումբ 2012): Փորձագետները դիտարկել են, որ վերջին տարիներին մի շարք դատական որոշումներ մանիպուլյացիայի են ենթարկվել քաղաքական իշխանությունների կողմից (Ֆրիդոմ Հաուս 2013 ա):

Դատական համակարգն աղքատ է ռեսուրսներով (Միջազգային ճգնաժամային խումբ 2012) և ունի պրոֆեսիոնալիզմի պակաս (Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հայաստան 2011): Դատական համակարգի սահմափակ պաշտոնների ներկա թիվը բավարար չէ արդյունավետ և գործող իրավական համակարգ ապահովելու համար (Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն 2012): Հայաստանի վերաբերյալ Գլոբալ Ինթեգրիթիի գնահատման աղյուսակը ցույց է տալիս, որ դատավորներ նշանակելու ընթացակարգը բավականաչափ թափանցիկ չէ, և դատավորների նշանակումն ու առաջխաղացումը շատ դեպքերում հիմնված է հովանավորչության, ազգակցության և անձնական հարաբերությունների վրա: Քաղաքական կամ ազգակցական պատկանելիության, կոռուպցիայի և այլ ոչ էթիկական միջոցների դիմելը դատավորի պաշտոն ձեռք բերելու համար սովորական պրակտիկա է (Գլոբալ Ինթեգրիթի 2011): Չնայած այդ ամենին, դիտարկվել է բարելավում և ընթացակարգերն ավելի անկողմնակալ ու արդար են դարձել, քան անցյալում էին (Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն 2012):

Հայաստանում դատական համակարգը բնակչության կողմից մեծապես դիտարկվում է որպես կոռումպացված, վարկաբեկված և ոչ արժանահավատ: 2012 թ. Կովկասյան բարոմետրը ցույց է տալիս, որ հարցման ենթարկված անձանց միայն 17 տոկոսն է ասել, որ հավատում են երկրի արդարադատության համակարգին (Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ 2012): Համաձայն Ֆրիդոմ Հաուսի զեկույցի՝ Հայաստանի դատական համակարգում կոռուպցիան զգալի է: Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2013 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) տվյալներով՝ հարցման ենթարկված քաղաքացիների մոտավորապես 70 տոկոսը կարծում է, որ դատական համակարգը կոռումպացված կամ խիստ կոռումպացված է՝ համարվելով երկրի ամենակոռումպացված հաստատություններից մեկը: Ավելին, հարցվածների մոտավորապես 1/5-ը ընդունել է, որ ստիպված է եղել կաշառք տալ դատական համակարգի հետ փոխհարաբերության ընթացքում վերջին 12 ամիսների ընթացքում (Թրանսփարենսի Ինթերնեշնլ 2013): Կամայական որոշումներն ու օրենքի գերակայության չարաշահումները, մասնավորապես, խնդրահարույց են հեռավոր շրջաններում, ուր ավելի մեծ կախվածություն է դիտարկվել հանրային ծառայություններից և աշխատանքներից (Միջազգային ճգնաժամային խումբ 2012):

Դատական համակարգի նկատմամբ հավատի լիակատար բացակայությունը միտված է հիմնովին սասանել քաղաքացիների վստահությունը պետության նկատմամբ (Բերթելսման

հիմնադրամ 2012): Կառավարությունն ընդունում է այս հիմնախնդիրը և կանոնավորապես հայտարարում է, որ անկախ և հաշվետու դատական համակարգի ապահովումը առաջնահերթություն է: Փորձագետները նշում են, որ բարեփոխումը, սակայն, դանդաղ է իրականանում (Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն 2012):

Ոստիկանություն

Ոստիկանությունը քաղաքացիների կողմից ընկալվել է որպես չորս առավել կոռումպացված ինստիտուտներից մեկը Հայաստանում՝ Թրանսփարենսի ինթերնեշնլի 2013 թ. ԿՅԲ արդյունքներով: Արձագանքելով քաղաքացիների՝ դատական համակարգի նկատմամբ անվստահությանը և դրա կարծեցյալ անպատժելիությանը, 2012 թ. Կովկասյան բարոմետրի տվյալներով, հարցման ենթարկվածների միայն 30 տոկոսն է ասել, որ վստահում են ոստիկանությանը:

Ըստ հնչող մեղադրանքների՝ ՀՀ ոստիկանությունը շարունակում է չարաշահել իշխանությունը և խոստովանություններ կորզելու նպատակով խոշտանգումներ է կիրառում և կալանավորելիս ու ձերբակալելիս կոպիտ է վերաբերվում քաղաքացիների նկատմամբ (ԱՄՆ Պետքարտուղարություն 2012 թ): Դիտորդները նշում են, որ կոռուպցիան և նեպոտիզմը փթթում են Հայաստանի ոստիկանության ղեկավարությունում, և չարաշահումների հանդեպ հանդուրժող են, քանի որ կառավարությունը կիրառում է անվտանգության ուժերը՝ լռեցնելու ընդդիմության առաջնորդներին (ՊՈՆԱՐՍ Եվրասիա 2012):

Ոստիկանությունը, որպես կառավարությանն առընթեր ինքնակառավարվող մարմին, գեկուցում է անմիջականորեն նախագահին, քանի որ Հայաստանը 2002 թ. ի վեր չունի ներքին գործերի նախարարություն: Եվրախորհուրդը առաջարկել է, որ կառավարությունը հաշվի առնի նման նախարարության ստեղծումը, քանի որ ներկա վիճակը սահմանափակում է ոստիկանության ղեկավարության հսկումն ու վերահսկումը (Միջազգային ճգնաժամային խումբ 2012): Համապատասխան իշխանությունները չեն կամենում հետաքննել խոշտանգումների և չարաշահումների դեպքերի վերաբերյալ հաղորդումները և երբեմն քաղաքացիներին ստիպում են հետ վերցնել բողոքները (Հյուսն Ռայթս Ուոչ 2013):

Հանրային կառավարում

Հիմնական ծառայություններ

2013 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՅԲ) տվյալներով բնակիչների 70 տոկոսն ասել է, որ Հայաստանում պետական պաշտոնյաները/ հանրային ծառայողները կոռումպացված կամ ծայրահեղ կոռումպացված են: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների 2010 թ. անցկացրած՝ Կոռուպցիան Հայաստանում. տնային տնտեսությունների և ձեռնարկությունների հետազոտության համաձայն՝ թե որ մակարդակի վարչական կոռուպցիան է ամենատարածվածը հարցին գրեթե 50 տոկոսը պատասխանել է՝ բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում առկա կոռուպցիան: Սույն ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ հետազոտության ենթարկված քաղաքացիների մեկ երրորդից ավելին գեկուցել է, որ «նախապես գիտեն ինչպես և որքան վճարեն»՝ ակնարկելով կաշառակերության ինստիտուտը (Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ 2010):

Համատարած կոռուպցիան ներթափանցել է հիմնական ծառայությունների ոլորտ: 2013 թ. Ըստ Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՅԲ) արդյունքների՝ կրթական համակարգը և բժշկական ծառայությունները համապատասխանաբար 58 և 66 տոկոսով համարվում են կոռումպացված կամ ծայրահեղ կոռումպացված: Մինչդեռ

2010 թ. առողջապահական համակարգն ու կրթությունն ամենակոռումպացված երեք ինստիտուտներից էին համարվում Հայաստանում՝ համաձայն տնային տնտեսությունների հետազոտության (Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոններ 2010): ԵԱՀԿ-ն հետազոտություն է անցկացրել բարձրագույն կրթության կոռուպցիայի վերաբերյալ Հայաստանի ուսանողների շրջանում, որոնց մոտավորապես 50 տոկոսը ցույց են տվել, որ կոռուպցիան այն աստիճանի տարածված է, որ իրենց անհարմար վիճակի մեջ է գցել: Հարցվողների համարյա կեսի կողմից ընդունելության քննությունները դիտարկվում էին որպես կոռուպցիայի առումով ամենախոցելի ոլորտ: Հատկանշական է, որ հարցման ենթարկված ուսանողների մոտավորապես 40 տոկոսը կոռուպցիան բարձրագույն կրթությունում համարում է համակարգային հիմնախնդիր, որ ներհատուկ է թերություններ ունեցող կրթական համակարգին (ԵԱՀԿ 2010):

Փորձելով կրճատել կոռուպցիան հանրային կառավարման մեջ՝ կառավարությունը 2011 թ. ընդունել է Հանրային ծառայության մասին նոր օրենք, որ ուժի մեջ է մտել 2012 թ.: Օրենքը կենտրոնացել է էթիկայի կանոնների, կոռուպցիայի կանխարգելման և գույքի հայտարարագրման, ինչպես նաև դրանց իրականացման մեխանիզմների վերաբերյալ դրույթների վրա:

Հանրային ֆինանսների կառավարում

Համաձայն Գլոբալ Ինթեգրիթի 2011 թ. Հայաստանի մասին զեկուլյցի՝ խորհրդարանի կողմից հսկողությամբ և հանրային հսկողության համար փաստաթղթերի հրապարակմամբ ուղեկցվող բյուջեի գործընթացը թափանցիկ է միայն թղթի վրա: Պրոֆեսիոնալ կարողության և ՀՀ ԱԺ պատգամավորների ուսուցման բացակայությունը, սակայն, սահմանափակում է նրանց կարողությունը հսկելու բյուջեի գործընթացը, ապահովելու, որ կառավարության պատասխանատուները զեկուլցեն կամ հետաքննություն սկսեն ապօրինի վարքագծի հետ կապված: Ավելին, քաղաքացիները տեղ չունեն դրան նպաստելու կամ մտահոգություն արտահայտելու համար (Գլոբալ Ինթեգրիթի 2011): Ի լրումն այդ ամենի՝ հարկային և մաքսային գործընթացները դիտվում են որպես խիստ կոռումպացված, որտեղ կա բարեփոխման և արդիականացման անհրաժեշտություն (Բերթելսման հիմնադրամ 2012):

Վերջերս ջանքեր են գործադրվել հաղթահարելու թերությունները երկրի հանրային ֆինանսների կառավարման մեջ (Հերիթիջ հիմնադրամ 2013)՝ ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման՝ ֆինանսական վերահսկողության տեսչության ստեղծումը և գնումների մասին նոր օրենքի ընդունումը՝ ի թիվս այլ գործողությունների (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ) 2011):

2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ընդհանուր իրավիճակը

2008 թ. կեղծված ընտրություններին հաջորդած քաղաքական ճգնաժամը և հասարակական խռովությունը բացահայտել են, որ անհրաժեշտություն կա երկրի կառավարման համակարգի խոր բարեփոխման, և իշխանափոխության իրականացման նոր քաղաքական կամք են առաջ բերել:

Վերջին տարիներին Հայաստանում մի շարք բարեփոխումներ են կատարվել՝ նպատակ ունենալով արդիականացնել պետությունը: Օրինակ, կառավարությունն ընդունել է 2009-2012 թթ. հակակոռուպցիոն ռազմավարություն, փողերի լվացման դեմ 2013-2015 թթ. ռազմավարություն, 2011 թ. նոր ընտրական օրենսգիրք և հանրային ծառայության մասին նոր օրենք՝ պետության մեջ օրինավորությանը նպաստելու նպատակով: Հայաստանը հետևել է ՏՀԶԿ-ի սահմանած բազմաթիվ հանձնարարականների՝ համաձայն Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) հանձնարարականների:

Մի շարք կառուցվածքային գործոններ, ինչպես օրինակ, արմատավորված կոռուպցիան, անկեղծ քաղաքական կամքի բացակայությունը, խոր արմատացած անձնական շահագրգռվածությունը կամ փոքրաթիվ հարուստ վերնախավի ազդեցիկ դերը այդ բարեփոխումները դարձնում են ոչ արդյունավետ: Ըստ 2013 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՅԲ) արդյունքների՝ հարցվածների միայն 20 տոկոսն է արդյունավետ գնահատել իշխանությունների գործունեությունը՝ ուղղված կոռուպցիան նվազեցնելուն: Կոռուպցիայի ցանկացած հնարավոր դրսևորման նկատմամբ Հայաստանի հասարակության շրջանում դիտվում է ցինիզմ, ընդ որում՝ հարցվողների ավելի քան 60 տոկոսն ընդունել է, որ չեն կարծում, թե քաղաքացիները կարող են եական ազդեցություն ունենալ կոռուպցիայի դեմ պայքարում: Համաձայն փորձագետների՝ Հայաստանի քաղաքացիներն ընդհանուր առմամբ չեն ցանկանում ներգրավվել կոռուպցիայի դեմ պայքարում, ինչն արտացոլված է «Ցանկանո՞ւմ եք ներգրավվել կոռուպցիայի դեմ պայքարում» հարցին դրական պատասխան տվածների շատ ցածր քանակում (43 տոկոս ցուցանիշը հարցման ենթարկված երկրների մեջ ամենացածրն է):

Իրավական շրջանակ

Միջազգային դաշնագրեր

Հայաստանը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մասնակից պետություն է 2007 թ. մարտից և դիտարկման մեխանիզմի իրականացման շրջանակում դիտարկման ենթակա 3-րդ խմբի երկրների շարքում է, այն առումով, որ առաջին փուլը պետք է ավարտվի 2013 թ.: 2003 թ. հուլիսին Հայաստանը նաև վավերացրել է Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան և դրա՝ մարդկանց թրաֆիկինգի վերաբերյալ արձանագրությունը: 2012 թ. Հայաստանը միացել է Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի Կոնվենցիայի զենքի վերաբերյալ արձանագրությունը: Հայաստանը նաև 1993 թ. ի վեր Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ պետություն է:

2005 թ. Հայաստանը վավերացրել է Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան և Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան:

Ազգային օրենքներ և կանոնակարգեր

Փորձագետները մատնանշել են Հայաստանի հակակոռուպցիոն օրենսդրական կառուցվածքի մի շարք թերություններ, իսկ 2011 թ. Գլոբալ Ինթեգրիթիի գնահատմամբ երկրի օրենսդրական դաշտը բնութագրվել է որպես թույլ՝ 100 միավորից արժանանալով 67-ի: Հաշվի առնելով ՏՀԶԿ-ի և ԳՐԵԿՈ-ի հանձնարարականները՝ կառավարությունը փոփոխության է ենթարկել Քրեական օրենսգիրքը, որ այժմ քրեականացնում է հիմնական կոռուպցիոն հանցանքները, ինչպիսիք են ակտիվ և պասիվ կաշառակերությունը, յուրացումը, վատնումը կամ հանրային ունեցվածքի այլ չարաշահումը/շեղումը, ծառայողական դիրքի չարաշահումը և կաշառակերությունը մասնավոր հատվածում (ՏՀԶԿ 2012): Հայաստանը ընդլայնել է «պաշտոնատար անձ»-ի սահմանումը, որն ընդգրկում է նաև արտասահմանցի և միջազգային հանրային պաշտոնյաներին: ՏՀԶԿ-ն հանձնարական է տվել, որ Հայաստանն ընդունի իրավաբանական անձի պատասխանատվություն (քրեական, քաղաքացիական կամ վարչական, ինչպես այն հարմար է համարվում) կոռուպցիայի մեջ ներգրավվելու համար՝ համապատասխան պատժամիջոցներով հանդերձ, ինչպես նաև քրեականացնի ապօրինի հարստացումը (ՏՀԶԿ 2011):

2008 թ. Հայաստանն ընդունել է Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենք, որպեսզի Քրեական օրենսգրքում ամրապնդվի փողերի լվացման դեմ առկա իրավական զինանոցը: Կառավարությունը առաջընթաց է գրանցել՝ հետևելով Եվրախորհրդի Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄՈՆԻՎԼԼ) հանձնարարականներին, ինչպես օրինակ, Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ 2013-2015 թթ. ազգային ռազմավարության հաստատումն է:

Ինչպես նշված է Նախորդ մասում, Նոր օրենք է ընդունվել հանրային ծառայության մասին, որն ուժի մեջ է մտել 2012 թ. հունվարին: Սույն օրենքի գործունեության շրջանակը նախկինում կիրառված օրենսդրությունից ավելի լայն է: Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը ոչ միայն քաղաքացիական ծառայողներին է առնչվում, այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց, Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի, Կենտրոնական բանկի, Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմերին, դատական դեպարտամենտի, դատախազության, Երևանի քաղաքապետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերին (ՏՀԶԿ 2011):

Նոր օրենքը, որ մշակվել է, որպեսզի բացառի հանրային եւ մասնավոր շահերի բախումը, կոռուպցիան և ազդեցության չարաշահումը, ներառում է իրավական դրույթներ և էթիկայի կանոններ, ինչպես նաև դրանց դիմելու ընթացակարգեր: Էթիկայի կանոնները ներկայացված են ոչ սպառնիչ ցանկում, համաձայն որի հանրային ծառայողն ու բարձրաստիճան պաշտոնատար անձը պետք է «հարգեն օրենքը և ենթարկվեն օրենքին, հարգեն հանրության բարոյական նորմերը, իրենց գործունեությամբ նպաստեն իրենց զբաղեցրած պաշտոնի և իրենց ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը, ամենուր և ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսևորեն իրենց պաշտոնին վայել վարքագիծ, հարգալից վերաբերմունք ցուցաբերեն բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս, բացառապես ծառայողական

նպատակներով օգտագործեն իրենց գործունեության առնչությամբ տրամադրված ...միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվությունը...» (ՏՀԶԿ 2012):

Էթիկայի կանոնների պահանջները, որ մանրամասնված են հանրային ծառայության մասին օրենքում, վերաբերում են հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի ինչպես լիազորությունների իրականացմանը, այնպես էլ նրա ամենօրյա վարքագծին: Սույն օրենքի համաձայն հանրային ծառայողը կամ բարձրաստիճան պաշտոնատար անձը չպետք է ընդունի նվեր (սահմանված է, թե հողվածի իմաստով «նվեր» հասկացությունը ինչ է ենթադրում): Օրենքը սահմանափակում է հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի հնարավորությունը՝ անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ կամ ծավալել այլ գործունեություն բացի իր հանրային պարտավորությունից:

2001 թ. ընդունվել է ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին օրենքը, որով առաջին անգամ պահանջվել է, որպեսզի իշխանության մարմինների ղեկավար աշխատողները հայտարարագրեն իրենց գույքն ու եկամուտները: Վերոհիշյալ օրենքը ուժը կորցրած է ճանաչվել Ֆիզիկական անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրման մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո: Վերջինս ուժի մեջ է մտել 2008 թ. հունվարի 1-ից (այն իր հերթին ուժը կորցրած է ճանաչվել 2012 թ. հունվարին Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելով): Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով զգալիորեն ավելացել է հանրային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց թիվը, որոնցից պահանջվում է հայտարարագրել իրենց գույքն ու եկամուտները: 2012 թ. հունվարին ուժի մեջ մտած օրենքը, սակայն, մի քայլ ետ է, քանի որ ընդամենը մի քանի բարձրաստիճան պաշտոնատար անձանցից, այդ թվում նախագահից, վարչապետից, նախարարներից և 500 բարձրաստիճան պաշտոնյաներից և նրանց հետ փոխկապակցված անձանցից է պահանջվում ամեն տարի Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացնել գույքի և եկամուտների հայտարարագրեր:

Կուսակցությունների ֆինանսավորումը կարգավորվում է 2002 թ. ընդունված օրենքով, որում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 2012 թ.՝ տեղ գտնելով նաև 2011 թ. ընդունված նոր ընտրական օրենսգրքում: ՀՀ օրենսդրությամբ կուսակցություններից պահանջվում է պատրաստել հաշվապահական հաշվետվություններ, ինչպես նաև տարեկան ֆինանսական հաշվետվություն, ինչը պետք է ներկայացվի կուսակցության անդամներին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն: Կուսակցության ստացած՝ հարյուր հազարից ավելի արժողությամբ նվիրատվության (200 ԱՄՆ դոլար) տեսակի, գումարի չափի և նվիրատուի ինքնության վերաբերյալ տեղեկությունները նշվում են կուսակցության ֆինանսական հաշվետվությունում: ՀՀ ընտրական օրենսգրքով կուսակցություններից պահանջվում է բացել առանձին նախընտրական հիմնադրամ, որտեղ կատարվող բոլոր մուծումների (ներառյալ նվիրատուների անունների ու հասցեների, նվիրատվությունների չափի) և հիմնադրամներից կատարվող ծախսերի մասին (ամսաթվերով և ծախսերը հաստատող փաստաթղթերով) պետք է գրանցել մինչև ընտրության օրը (ԳՐԵԿՈ 2012): Կուսակցությունները պարտավոր են հայտարարագրել ողջ ֆինանսական միջոցները, այդ թվում՝ նվիրատվությունները բնամերթով, ակտիվը, ծառայությունները, շուկայական գնից ցածր գնված կամ

վարձակալած ապրանքները, բանկային փոխառությունները, հիմնադրամների հետ պայմանագրերը (ՏՀԶԿ 2012): Վերջին փոփոխությունները ուժեղացնում են կուսակցության ֆինանսների վերահսկողությունն ու ստուգումը և հստակեցնում են պատժամիջոցները: ԳՐԵԿՈ-ն հանձնարարական է տվել, որ կառավարությունը միջոցներ ձեռնարկի, որպեսզի վերահսկողությունն ավելի գործուկյա և արդյունավետ դարձվի (ԳՐԵԿՈ 2012):

ՀՀ Ազգային ժողովը ընդունել է Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքը 2003 թ. սեպտեմբերին: Սույն օրենքը սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև ապահովում է մատչելիություն և հրապարակայնություն: Սույն օրենքի գործողությունը տարածվում է «պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա»: Տեղեկություն ստանալու նպատակով հարցումը կարող է տեղեկատվություն տնօրինողին ուղղվել գրավոր կամ բանավոր դիմումով: Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքով սահմանված չէ ունենալ անկախ վերահսկիչ մարմին: ՀՀ կառավարությունը փաստացիորեն ակտիվորեն ձեռնամուխ է եղել էլեկտրոնային կառավարման և հաղորդակցման գործիքների ներդրմանը (ՏՀԶԿ 2012): ԹԻՀԿ-ի փորձի արդյունքում պարզվել է, որ ուղարկված դիմումների 85 տոկոսին պատասխանել են, որոնցից մոտավորապես 80 տոկոսին տրվել է անհապաղ պատասխան: Այնուամենայնիվ, միայն 20 տոկոս դիմումները կարող են համարվել ամբողջական կամ բավարար (Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն 2012):

Ըստ 2011 թ. Գլոբալ Ինթեգրիթիի գնահատման աղյուսակի՝ տեղեկություններ հայտնողներին պաշտպանելու Հայաստանի իրավական դաշտը թույլ է: ՏՀԶԿ-ն հանձնարարական է տվել, որպեսզի ՀՀ կառավարությունը միջոցներ ձեռնարկի անօրինական գործողությունների մասին հայտնող պետական հիմնարկների աշխատակիցներին պաշտպանելու համար և հանդես գա նրանց շրջանում իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացմամբ: Չնայած Հանրային ծառայության մասին ՀՀ նոր օրենքի ընդունմամբ ներմուծվել է դրույթ, համաձայն որի հանրային ծառայողն իր ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ պետք է օրենքով սահմանված կարգով համապատասխան պաշտոնատար անձանց տեղեկացնի այլ ծառայողների կատարած իրավախախտումների և հանրային ծառայությանն առնչվող ցանկացած անօրինական, այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի գործողությունների մասին, կազմակերպությունը դարձյալ համարում է, որ Հայաստանը հանձնարարականը չի կատարել: 2013 թ. ԹԻ Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) արդյունքները հակտանշորեն ցույց են տալիս, որ հարցման ենթարկված անձանց մոտավորապես երկու երրորդը «կհայտնեի՞ք արդյոք, եթե ձեր շրջապատում տեսնեիք կոռուպցիոն դրսևորումներ և այլն» հարցին պատասխանել է՝ ոչ, և նրանց մեծամասնությունը իրենց ընտրությունը արդարացրել է՝ գտնելով, որ դրանից, մինևույն է, ոչինչ չի փոխվի:

Ինստիտուցիոնալ շրջանակ

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը ստեղծվել է ՀՀ Նախագահի 2004 թ. հրամանագրով՝ ելնելով ՀՀ-ում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման համար պետական լիազորված մարմինների գործունեության համադրման անհրաժեշտությունից: Խորհուրդը նախագահում է ՀՀ վարչապետը: Խորհրդի կազմում ընդգրկված են ինը պաշտոնատար անձ՝ ներկայացնելով ՀՀ ԱԺ-ն, ԱԺ վերահսկիչ պալատը, ՀՀ Նախագահի գրասենյակը, ՀՀ կենտրոնական բանկը, ինչպես նաև ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարը, ՀՀ արդարադատության նախարարը և այլն:

2011 թ. Հայաստանի վերաբերյալ ՏՀԶԿ մոնիտորինգային զեկույցով ամրագրվել է, որ թեպետ այս հաստատության գործողությունների և արդյունքների վերաբերյալ քիչ տեղեկություն կա, ընդհանուր տպավորությամբ այն թույլ կառույց է:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ Նախագահի 2004 թ. նույն հրամանագրով, ինչով Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը: Հանձնաժողովը նախագահում է ՀՀ Նախագահի օգնականը: Հանձնաժողովի դերը «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի (ՀՌԻՄԾ) նկատմամբ մոնիտորինգ իրականացնելն է՝ ներառելով հանրությանը, ՉԼՄ-ների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային կազմակերպությունների ու ՀՀ հանրային կառույցների փորձն ուսումնասիրելն ու առաջարկություններով հանդես գալը, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված՝ միջազգային համաձայնագրերից և հանձնարարականներից բխող պարտավորությունների և հանձնառությունների կատարման մոնիտորինգը, նորմատիվ ակտերի փորձագիտական վերլուծությունը և դրանց բարելավման ուղղությամբ կատարված առաջարկությունների ներկայացումը» (ՏՀԶԿ 2011 թ.):

Հանձնաժողովի գործունեության և արդյունքների մասին տեղեկատվությունը քիչ է հասանելի: Փորձագետների կարծիքով հանձնաժողովը գոյություն ունի միայն թղթի վրա և նիստեր չի անցկացրել վերջին 2 տարիների ընթացքում²:

Օմբուդսմեն

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) ինստիտուտը ազգային Օմբուդսմենի համարժեքն է: Նա ընտրվում է 6 տարի ժամանակով ՀՀ ԱԺ ձայների մեծամասնության երեք հինգերորդով: Սահմանադրությամբ նախատեսվում է, որ Մարդու իրավունքների պաշտպանն անփոփոխելի է:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը հազեցած է համապատասխան ռեսուրսներով և աշխատակազմով: ԵԱՀԿ ֆինանսական աջակցությամբ մարդու իրավունքների պաշտպանը կարողացել է բացել 6 տարածաշրջանային գրասենյակներ, որոնք իրենց ներկայությունն են ապահովում ողջ երկրում: Համաձայն ՄԻՊ տարեկան հաշվետվության՝ ՄԻՊ-ը իրավական

² Սույն տեղեկատվությունը քաղվել է տեղական փորձագետների հետ խորհրդակցության արդյունքում:

աջակցություն է ցուցաբերել 7395 անձանց, ավելի քան 500 բողոքներ բավարարվել են բողոք ներկայացնողների օգտին: Հաշվետվությունը նաև ցույց է տալիս, որ մարդու իրավունքների ոտնահարումների դեմ 31 որոշումներ են կայացվել՝ պատրաստված պետական կառույցների կողմից (Մարդու իրավունքների պաշտպան 2013):

Ֆինանսական դիտարկումների կենտրոն

2008 թ. ընդունված Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով նախատեսվում է «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լիազոր մարմնի» ստեղծում: Հայաստանի Հանրապետության ֆինանսական հետախուզության մարմին (ՖՀՄ) է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ), որը պատասխանատու է փողերի լվացման կասկածահարույց գործունեությանն առնչվող կասկածելի գործարքների և այլ համապատասխան տեղեկատվության հավաքման, վերլուծության և համապատասխան մարմինների հետ փոխանակման համար: ՖԴԿ-ը նաև պատասխանատվություն է կրում միջնորդություն ներկայացնելու, որպեսզի կասկածելի գործարքը կասեցվի և սառեցվի ֆինանսական միջոցների մեխանիզմը, որ սահմանված է օրենքով: Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ) ՀՀ կենտրոնական բանկի առանձնացված ստորաբաժանում է, սակայն գործում է ինքնավար, օրինակ, ի թիվս այլ գործառույթների, բյուջեի, աշխատողների ընդունման գործընթացների և ղեկավարի առաջադրման հետ կապված (Արժույթի միջազգային հիմնադրամ 2010): ՖԴԿ-ի ներքին գործառույթները արդիականացվել են Հայաստանում փողերի լվացման դեմ պայքարի հզորացման շրջանակում (Եվրոպայի խորհուրդ 2012):

ՖԴԿ-ն ֆինանսական հետախուզության մարմինների «Էզմոնտ» խմբի անդամ է, ուստիև ենթակա է ՖՀՄ միջև տեղեկատվության փոխանակման Էզմոնտյան սկզբունքներին:

Վերահսկիչ պալատ

Հիմնադրվելով 1996 թ.՝ ՀՀ վերահսկիչ պալատը բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող պետական մարմինն է: Վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է ՀՀ Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից: Վերահսկիչ պալատի նախագահի տեղակալը և խորհրդի մյուս հինգ անդամները նշանակվում են ՀՀ Նախագահի կողմից՝ վերահսկիչ պալատի նախագահի առաջարկությամբ:

2006 թ. Վերահսկիչ պալատի մասին ՀՀ նոր օրենքի ընդունումով՝ Վերահսկիչ պալատը սկսել է ավելի անկախ գործել, քան նախկինում, երբ այն ՀՀ ԱԺ ենթակայության ներքո էր: 2011 թ., երբ ՏՀԶԿ-ն հրապրակում էր իր մոնիտորինգային զեկույցը, պալատն ուներ 131 անդամ ունեցող աշխատակազմ:

Պալատը վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ: Պալատն իրականացնում է մի քանի տեսակի՝ ֆինանսական համապատասխանության, արդյունավետության (կատարողական) և բնապահպանական վերահսկողություն: Վերահսկիչ պալատի ուշադրության կենտրոնում «կեղծիքի» և «կոռուպցիոն դեպքերի»

բացահայտումն է (ՏՀԶԿ 2011): Այն զեկույցներ է ուղարկում Գլխավոր դատախազություն՝ օրենքի խախտման կասկածի դեպքում:

2011 թ. ՏՀԶԿ մոնիտորինգային զեկույցում նշվում է, որ պալատի գործունեության ծրագիրը պետք է հաստատեր ՀՀ ԱԺ-ն, որը կարող է սահմանափակել այդ հաստատության անկախությունը:

Պետական ներքին ֆինանսական հսկողություն

2010 թ. կառավարությունը հիմնադրել է Պետական ներքին ֆինանսական հսկողություն իրականացնող մարմին ՀՀ ֆինանսների նախարարության կազմում: Այն բաղկացած է երեք տարրից՝ (i) ֆինանսների կառավարում և հսկողություն՝ հիմնված ղեկավարության հաշվետվողականության վրա, (ii) ներքին աուդիտ, որ անհրաժեշտության դեպքում բոլոր մակարդակներում հավաստիացում է ապահովում ղեկավարությանը, (iii) կենտրոնական համապատասխանեցման բաժին՝ կանոնակարգելու պետական ներքին ֆինանսական հսկողությանն առնչվող հարաբերությունները՝ ստանդարտներ սահմանելու և դրանք մոնիտորինգի ենթարկելու նպատակով (ՏՀԶԿ 2011):

Սույն մարմնի հիմնադրումը պետական ֆինանսական համակարգերի և ղեկավարման արդիականացման առումով դիտարկվել է որպես մեկ քայլ առաջ: Այնուամենայնիվ, ռեսուրսների և դասընթաց անցած աշխատակազմի բացակայությունը խոչընդոտում է այդ ինստիտուտի արդյունավետությանը: Տվյալների հավաքումը և մատչելի տեղեկատվությունը բավարար չէ պետական ծախսերը պատշաճորեն վերլուծելու համար: (Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն՝ GIZ 2012):

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ Նախագահի 2012 թ. հրամանագրով: Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով հանձնաժողովը պատասխանատու է բարձրաստիճան պաշտոնատար անձանց և սույն օրենքով նախատեսված այլ անձանց գույքի հայտարարագրերի ռեեստրի վարման, դրանց վերլուծության և հրապարակման համար (տե՛ս վերոնշյալը՝ ՏՀԶԿ 2011):

Սահմանափակ տեղեկատվություն է մատչելի այս նոր ինստիտուտի կատարողականի մասին: Եվրոպական հանձնաժողովն իր՝ Հայաստանի վերաբերյալ Եվրոպական հարևանության քաղաքականության երկրի առաջընթացի 2012 թ. զեկույցում խրախուսում է, որ Հայաստանը զարգացնի Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի պետական հանձնաժողովի կարողությունները, անկախությունը և թափանցիկությունը» (Եվրոպական հանձնաժողով 2013):

Կենտրոնական ընտրական հանձնաժողով

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) այն մարմինն է, որը պատասխանատու է ընտրությունների կազմակերպման և դրանց օրինական անցկացման երաշխավորման համար: ԿԸՀ-ն նաև պատասխանատվություն է կրում

դիտարկելու նախընտրական քարոզչությունը և վերահսկելու կուսակցությունների ֆինանսավորումը:

Ըստ Գլոբալ Ինթեգրիթիի՝ ԿԸՀ աշխատակազմի նշանակումը չի կատարվել թափանցիկ և անկողմնակալ ձևով: ԿԸՀ-ն չունի համապատասխան միջոցներ պատշաճորեն իրականացնելու իր հանձնառությունները (Գլոբալ Ինթեգրիթի 2011): ԿԸՀ-ի անկախության, անկողմնակալության և բավարար ռեսուրսների պակասը թույլ չի տալիս, որ այն կանխի ընտրակեղծիքը, ինչի մասին հաղորդվել է 2008, ինչպես նաև 2012/2013 թթ. իրականացված ընտրությունների ժամանակ (տե՛ս վերը նշվածը)³:

Այլ համապատասխան շահագրգիռ կողմեր

Քաղաքացիական հասարակություն

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է յուրաքանչյուր անձի հավաքներ անցկացնելու և միավորումներ կազմելու իրավունքը, և իշխանություններն ընդհանուր առմամբ գործնականում հարգել են այդ իրավունքը (ԱՄՆ Պետքարտուղարություն 2012 թ): Սակայն 2008 թ. հաջորդող ճգնաժամի արդյունքում կառավարությունը հարկադիր սահմանափակումներ է մտցրել խմբերի՝ ազատ հավաքվելու իրավունքում (Բերթելսման հիմնադրամ 2012): Միջազգային և ներքին ճնշումը ստիպել է կառավարությանը, որ ցույցերն արգելելու պրակտիկային վերջ տա մայրաքաղաքի Ազատության հրապարակում, որը խիստ խորհրդանշական վայր է Հայաստանում (Ֆրիդոմ Հաուս 2013 ա): Շնորհատուները մատնանշել են, որ հասարակական կազմակերպությունները գործում են անկանխատեսելի և տարբեր կազմակերպությունների համար անհավասար միջավայրում (ԹԻՀԿ 2011 թ):

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) համար դժվար և ժամանակատար է գրանցվելու պահանջը (Ֆրիդոմ Հաուս 2013 ա): Կառավարությունը շանում էր փոփոխություններ մտցնել ՔՀԿ գրանցումը կանոնակարգող օրենքների մեջ, որպեսզի նրանց նկատմամբ վերահսկողությունն ավելացներ՝ ստիպելով, որ վերագրանցվեն ղեկավարի փոփոխության ամեն առանձին դեպքում և բացահայտեն անդամների, կառավարման, ֆինանսների և այլնի մասին ոչ համամասն տեղեկություններ: Սակայն, ի դեմս միջազգային հանրության և տեղական քաղաքացիական հասարակության խմբերի խիստ մտահոգությունների, կառավարությունը սառեցրել է գործընթացը (Բերթելսման հիմնադրամ 2012):

Հայաստանն ունի եռանդուն քաղաքացիական հասարակություն, որ կազմված է տարբեր բնագավառներում աշխատող մեծաթիվ հասարակական կազմակերպություններից: Քաղաքացիական հասարակության խմբերի ազդեցությունը հանրային քաղաքականության վրա, այնուամենայնիվ, սահմանափակ է, քանի որ կառավարությունը չի ցանկանում, որ ՔՀԿ-ները լուրջ դերակատարում ունենան հանրային բանավեճում և քաղաքականության ստեղծման մեջ (Բերթելսման հիմնադրամ 2012): Լրատվամիջոցների, դրամաշնորհատու հանրության և Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները համեմատաբար թույլ կապ են տեսնում ՀՀ-ների և բնակչության միջև (ԹԻՀԿ 2011 թ):

³ Սույն տեղեկատվությունը բաղվել է տեղական փորձագետների հետ խորհրդակցության արդյունքում:

Լրատվամիջոցներ

Չնայած մամուլի և արտահայտման ազատության սահմանադրական և իրավական դրույթներին՝ Հայաստանի լրատվամիջոցների միջավայրը սահմանափակված է և մնում է քաղաքական ազդեցության տակ (Ֆրիդոմ Յաուս 2013 զ): 179 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 74-րդ հորիզոնականը Լրագրողներ առանց սահմանի կազմակերպության 2013 թ. Մամուլի ազատության ցուցանիշով:

Չրպարտությունը ապաքրեականացվել է 2010 թ.: Պատմականորեն, սակայն, զրպարտության համար դատաքննությունները, որ վտանգել են լրատվամիջոցների ֆինանսական կայունությունը, արտահայտման և մամուլի իրավունքի հիմնական մտահոգությունն են եղել Հայաստանում համաձայն զանազան միջազգային քաղաքացիական հասարակության խմբերի (Ֆրիդոմ Յաուս 2013 ա):

Հայաստանում լրագրողների հանդեպ հալածանքն ու բռնությունը քչացել է, սակայն մնացել է որպես հարաբերականորեն տարածված (Միջազգային ճգնաժամային խումբ 2012): Համաձայն Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի հաղորդման՝ 2012 թ. առաջին ինը ամիսների ընթացքում տեղի են ունեցել լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության 4 դեպք և 25 ահաբեկման փորձ առավելապես դատական գործերի և տուգանքների միջոցով: Հայաստանում մամուլի ազատությանն ուղղված մյուս լուրջ մարտահրավերը լրագրողներին հալածանքի ենթարկող անվտանգության ուժերի հարաբերական անպատժելիությունն է: Ոչ մի ջանք չի գործադրվել, որպեսզի պատժի ենթարկեն ոստիկանության և կառավարության այն պաշտոնյաներին, որոնք հարձակում են գործել լրագրողների վրա 2008 թ. հետընտրական խռովությունների ընթացքում (Միջազգային ճգնաժամային խումբ 2012):

Տպագիր մամուլը հիմնականում տնօրինվում է մասնավոր անձանց կողմից և ազատ է, այնուամենայնիվ, տպագիր մամուլի ներկայացուցիչները միտում ունեն արտահայտելու իրենց սեփականատերերի գաղափարական տեսակետները (Ֆրիդոմ Յաուս 2013 զ): Մամուլի, որ ընդհանուր առմամբ մատչելի է մեծ քաղաքներում, ազդեցությունը խիստ սահմանափակ է հեռուստատեսության համեմատ (քաղաքացիների 90 տոկոսի համար տեղեկատվության հիմնական աղբյուրը՝ համաձայն Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների), որի վրա մեծ է քաղաքական ազդեցությունը (Միջազգային ճգնաժամային խումբ 2012): Կանոնավոր կերպով իրականացվել է հեռարձակվող լրատվամիջոցների լիցենզավորում և կանոնակարգում՝ սահմանափակելու նրանց ազատությունն ու բազմազանությունը: Ա1+-ը՝ վերջին անկախ հեռուստաալիքը փակվել է 2002 թ., որի լիցենզիան դեռևս սառեցված է (Ֆրիդոմ Յաուս 2013 զ): Ա1+-ը փորձել է նոր լիցենզիա ձեռք բերել՝ մասնակցելով մրցույթների, բայց ամեն անգամ պարտվել է⁴:

Ինտերնետի ներթափանցման աստիճանը համարյա 40 տոկոս է: Հանրությունը գնալով ավելի շատ է կիրառում և վստահում տեղեկատվության առցանց աղբյուրներին: Ինտերնետը պաշտոնապես չի սահմանափակված, սակայն

⁴ Սույն տեղեկատվությունը քաղվել է տեղական փորձագետների հետ խորհրդակցության արդյունքում:

կառավարությունը խոչընդոտել է որոշակի ինստերնետային կայքերի՝ գրկելով մատչելիությունից 2008 թ. ճգնաժամի ընթացքում (Միջազգային ճգնաժամային խումբ 2012): Առցանց սորությունները և բլոգերները խիստ կարևոր դեր են խաղացել Հայաստանի լրատվամիջոցների դաշտում (Ֆրիդոմ Հաուս 2013 գ):

3.3.ՂՈՒՄՆԵՐ

American Bar Association, 2012, *Judicial reform index for Armenia*.

(http://www.americanbar.org/content/dam/aba/directories/roll/armenia/armenia_jri_vol_iv_english_12_2012.authcheckdam.pdf)

Bertelsmann Foundation, 2012, *BTI 2012 Armenia country report*. (<http://www.bti-project.de/fileadmin/Inhalte/reports/2012/pdf/BTI%202012%20Armenia.pdf>)

Caucasus Research Resources Centers, 2012, *Caucasus barometer*.

(http://www.crc.am/hosting/file/_static_content/barometer/di12/CB_2012_Presentation_eng.pdf)

Caucasus Research Resources Centers, 2010, *Armenia corruption survey of households*.

(<http://old.crc.am/index.php/en/159/>)

Council of Europe, 2012, *Armenia progress report and written analysis by the secretariat of core recommendations*, MONEYVAL(2012)27.

(http://www.coe.int/t/dghl/monitoring/moneyval/Evaluations/Progress%20reports%20y/MONEYVAL%282012%2927_ARM_2nd3rdround_ProgRep.pdf)

Նարինե Իսմայիլի, 2013, Հայաստան. հակահարված քվեատուփի մոտ, Թրանսպարենսի Ինթերնեշնլի Space for Transparency բլոգ (<http://transparency.am/hy/news/view/580>)

Եվրոպական հանձնաժողով, 2013, ԵԶԲ Երկրի առաջընթացի զեկույց 2012 -

ՀԱՅԱՍՏԱՆ (http://www.eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/political_framework/2013_03_21_hy.htm)

France Diplomatie, 2013, *Présentation de l'Arménie*. (<http://www.diplomatie.gouv.fr/fr/dossiers-pays/armenie/presentation-de-l-armenie/>)

Freedom House, 2013a, *Nations in transit Armenia*. (<http://www.freedomhouse.org/report/nations-transit/2013/armenia>)

Freedom House, 2013b, *Freedom in the world*. (<http://www.freedomhouse.org/report/freedom-world/2013/armenia>)

Freedom House, 2013c, *Freedom of the press*. (<http://www.freedomhouse.org/report/freedom-press/2013/armenia>)

GIZ, 2012, *Public financial management in the South Caucasus*. (<http://www.giz.de/themen/en/37613.htm>)

Global Integrity, 2011, *Armenia - Scorecard 2011*. (<http://www.globalintegrity.org/report/Armenia/2011/scorecard>)

GRECO, 2010, *Third evaluation round evaluation report on Armenia on transparency of party funding*.

(http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round3/GrecoEval3%282010%294_Armenia_Two_EN.pdf)

GRECO, 2012, *Third evaluation round compliance report on Armenia*.

(http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round3/GrecoRC3%282012%2921_Armenia_EN.pdf)

Heritage Foundation, 2013, *Index of economic freedom*. (<http://www.heritage.org/index/country/armenia>)

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, 2013, Տարեկան զեկույց.

(http://www.ombuds.am/pages/downloadPdf/file_id/1685)

Հյուսն ուայթս ուոթթ, 2013, Համաշխարհային զեկույց 2013 Հայաստան (<http://www.hrw.org/world-report/2013/country-chapters/112585>)

International Crisis Group, 2012, *Armenia: An opportunity for statesmanship*. (<http://www.crisisgroup.org/en/regions/europe/south-caucasus/armenia/217-armenia-an-opportunity-for-statesmanship.aspx>)

International Monetary Fund, 2010, *Armenia detailed assessment report on anti-money laundering and combating the financing of terrorism*. (<http://www.imf.org/external/pubs/ft/scr/2010/cr1009.pdf>)

OECD, 2011, *OECD Anti-Corruption network for Eastern Europe and Central Asia Armenia monitoring report*. (<http://www.oecd.org/corruption/acn/48964985.pdf>)

OECD, 2012, *OECD anti-corruption network for Eastern Europe and Central Asia Armenia progress report*, (<http://www.oecd.org/corruption/acn/49910824.pdf>)

ԵԱՀԿ, 2010, Ոսանողների ընկալումը բուհական համակարգում կոռուպցիայի մասին (<http://www.osce.org/hy/yerevan/75097>)

PONARS Eurasia, 2012, *Police reform and corruption in Georgia, Armenia, and Nagorno-Karabakh*, Policy Memo No. 232. (http://www.gwu.edu/~ieresgwu/assets/docs/ponars/pepm_232_Shahnazarian_Sept2012.pdf)

Reporters Without Borders, 2013, *Press freedom index*. (<http://en.rsf.org/press-freedom-index-2013,1054.html>)

Թրանսպարենսի ինթերնեշնլ, 2013, 2013 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր (ԿՐԲ) (http://www.transparency.org/gcb2013/in_detail)

Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2011 ա, Եվրոպական հարևանության բաղաձայնություն. Հայաստանի հակակոռուպցիոն պարտավորությունների 2010 թ. մոնիտորինգ (<http://transparency.am/publication.php?id=41>)

Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2012, Տեղեկատվության ազատությունը հարավկովկասյան երկրներում (<http://transparency.am/publication.php?id=46>)

Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2011 թ, Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը (http://transparency.am/dbdata/NED_publication_2.pdf)

Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2012, Հեռախոսային հարցում 2012 թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ (<http://transparency.am/hy/publications/view/81>)

US Department of State, 2012a, *Investment climate statement – Armenia*. (<http://www.state.gov/e/eb/rls/othr/ics/2012/191100.htm>)

ԱՄՆ պետքարտուղարության ժողովրդավարության, մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրո, Մարդու իրավունքների զեկույց 2012 թ. Հայաստան, 2012 թ (http://photos.state.gov/libraries/armenia/231771/PDFs/hrr2012_arm.pdf)

US Department of State, 2013 a, *Armenia money laundering report*. (<http://www.state.gov/i/inl/rls/nrcrpt/2013/vol2/index.htm>)

ԱՄՆ պետքարտուղարություն. Չեկույց մարդկանց թրաֆիքինգի մասին Հայաստան, 2013 թ, (http://photos.state.gov/libraries/armenia/231771/PDFs/tip2013_arm.pdf)

World Bank, 2011, *Worldwide governance indicator*. (http://info.worldbank.org/governance/wgi/sc_chart.asp)

«Հակակոռուպցիոն տեղեկատվի պատասխանները ողջ աշխարհում պրակտիկ մասնագետներին տրամադրում են հրատապ, ըստ պահանջի ամփոփ տեղեկագիր կոռուպցիայի վերաբերյալ: Ելնելով հանրության համար մատչելի տեղեկատվությունից՝ ամփոփ տեղեկագրերը ներկայացնում են որոշակի հարցին առնչվող ընդհանուր իրավիճակը և անպայման չէ, որ արտացոլեն Թրանսպարենսի ինթերնեշնլի պաշտոնական դիրքորոշումը»: